ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԶԱՌԻԹԱՓԻ ԱՎԱԳԱՆԻ
REPUBLIC OF ARMENIA VAYOTS DZOR REGION ZARITAP VILLAGE

ՀՀ Վայոց ձոր, գ. Զառիթափ /հեռ. 91-5-07/

25 հոկտեմբերի 2013թ. ՈՐՈՇՈՒՄ 27

# ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել ավագանու թիվ 11 նիստի օրակարգի հարցերը.
1.Զառիթափ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու մասին:
2.Զառիթափ համայնքի 2013թ. բյուջեի նախահաշիվներում փոփոխություններ կատարելու մասին:

Քվեարկության արդյունքները՝ կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Նիստին մասնակցող ավագանիներ՝

Դավթյան Դ.
Ասլանյան Ե.
Ալավերդյան Լ.
Բաբայան Վ.
Գրիգորյան Գ.

Համայնքի ղեկավար Խ.Դավթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
REPUBLIC OF ARMENIA VAYOTS DZOR REGION ZARITAP VILLAGE

ՀՀ Վայոց ձոր, գ. Զառիթափ /հեռ. 91-5-07/

**25 հոկտեմբերի 2013թ.**

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ 28

ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջներով, Զառիթափ համայնքի ավագանին

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1.Հավանություն տալ ՀՀ Վայոց Ձոր մարզի Զառիթափ գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսված փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է համայնքի վարչական տարածքում գյուղ նշանակության 0261—0081 ծածկագրով 0.20965 հա հողատեսքը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ օրվա կարգավորիչ ջրամբարի կառուցման և սպասարկման համար:
2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործարքը:

Քվեարկության արդյունքները՝ կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0
Նիստին մասնակցող ավագանիներ՝

Դավթյան Դ.
Ասլանյան Ե.
Ալավերդյան Լ.
Բաբայան Վ.
Գրիգորյան Գ.

Համայնքի ղեկավար Խ.Դավթյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

REPUBLIC OF ARMENIA VAYOTS DZOR REGION ZARITAP VILLAGE

ՀՀ Վայոց ձոր, գ. Զառիթափ /հեռ. 91-5-07/

## ՈՐՈՇՈՒՄ 29

25 հոկտեմբերի 2013թ.

**ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և ,,Բյուջետային համակարգի մասին,, ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասով:

## Ավագանին Որոշեց

1. Զառիթափ համայնքի 2013թ.-ի բյուջեի Զառիթափի այլ մշակութային ծառայություններ նախահաշվում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1.1.Այլ մշակութային ծառայություններ գործառնական դասակարգում 08-2-4 տնտեսագիտական դասակարգում 4269 հոդվածից 30000 դրամ տեղափոխել՝Գործառնական դասակարգման 08-2-4. տնտեսագիտական դասակարգման ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 հոդվածին:

Քվեարկության արդյունքները՝ կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Նիստին մասնակցող ավագանիներ՝

Դավթյան Դ.
Ասլանյան Ե.
Ալավերդյան Լ.
Բաբայան Վ.
Գրիգորյան Գ.

Համայնքի ղեկավար Խ.Դավթյան